Կարգապահական գործ թիվ ԿԳ-21015

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 294-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/175-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱԿ ԴԱՆԻԵԼԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Էմին Բեգլարյանի, Խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Պավել Գյուլումյանի և Գայանե Դեմիրչյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Արտակ Դանիելի Քոչարյանին (արտոնագիր թիվ 673) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմենակ Նիկոլայի Բաղալյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների Պալատ, հայտնել է, որ 2019 թվականին դիմել է փաստաբան Արտակ Քոչարյանին (**այսուհետ՝ նաև Փաստաբան**)՝ երկու գործերով իրեն իրավաբանական օգնություն տրամադրելու համար: Վերջինս փաստաբանի հետ 14.11.2019թ-ին կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր, սակայն փաստաբանը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ցուցաբերել է անգործություն և միայն մեկ անգամ, իր հեռախոսազանգից հետո, ասել է, որ թիվ 90204219 քրեական գործով տեղի է ունեցել թվով երկու դատական նիստ:

Դիմումին կից ներկայացվել է նաև 14.11.2019թ. կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագրի պատճենը:

Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության և վերադարձնել իր կողմից վճարված 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 15.07.2021թ. թիվ 123-Ա/ԿԳ-21015 որոշմամբ փաստաբան Արտակ Դանիելի Քոչարյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-**

ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2 և 3.5.5 **ենթակետերի խախտման հատկանիշներով:**

22.07.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը նշել է, որ 2019 թվականին դիմել է փաստաբանին երկու գործերով իրեն իրավաբանական օգնություն տրամադրելու համար և 2019 թվականի նոյեմբերի 14-ին կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր:

Դիմողի պնդմամբ փաստաբանը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ցուցաբերել է անգործություն, չի ներկայացրել որևիցե փաստաթուղթ իր իրավունքների պաշտպանության նպատակով, չի տեղեկացրել գործի ընթացքի մասին և միայն մեկ անգամ, իր հեռախոսազանգից հետո, ասել է, որ թիվ 90204219 քրեական գործով տեղի է ունեցել թվով երկու դատական նիստ:

Դիմողը նաև հավելել է, որ իր կնոջ և մասնագետի մասնակցությամբ հանդիպում է ունեցել փաստաբանի հետ, որի ընթացքում սակայն չեն քննարկել որևիցե գործ:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը նշել է, որ Դիմողի հետ 2019 թվականի նոյեմբերի 14-ին կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր, որով ստանձնել է Դիմողի իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ հարուցված թիվ 90204219 քրեական գործի վարույթի ընթացքում՝ որպես տուժողի ներկայացուցիչ, ինչպես նաև «Օնեքս» կազմակերպության դեմ ներկայացված քաղաքացիական գործի շրջանակներում:

Փաստաբանը նշել է նաև, որ սահմանված կարգով ձեռնարկել է իր վստահորդի (Դիմողի) իրավունքների և շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցները՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը:

Փաստաբանը հավելել է նաև, որ մշտապես տեղյակ է պահել իր վստահորդին գործի ընթացքի մասին: Մասնավորապես, Դիմողը մի քանի անգամ այցելել է իրեն իր գրասենյակում՝ այդ այցերի շրջանակներում քննարկելով նշված քրեական գործի հետ կապված հարցերը:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

22.09.2021թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

25.09.2021թ կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 20.10.2021թ ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի և Փաստաբանի միջև 2019 թվականի նոյեմբերի 14-ին կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1.1 կետի համաձայն. «Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը ստանձնում է նրա իրավունքների և շահերի պաշպանությունը հարուցված թիվ 90204219 քրեական գործի վարույթի ընթացքում՝ որպես տուժողի ներկայացուցիչ, ինչպես նաև «Օնեքս» կազմակերպության դեմ ներկայացված քաղաքացիական գործի շրջանակներում»:

3. Պայմանագրի 3.1 կետի համաձայն. «Պատվիրատուն սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման համար Կատարողին վճարում է 500.000/հինգ հարյուր հազար» ՀՀ դրամ:

4. 2019 թվականի մայիսի 2-ին Դիմողի անունից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել Երևանի կայազորի զինվորական դատախազությունն:

5. 13.05.2019թ. Երևանի կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90204219 քրեական գործը:

6. 31.10.2019թ. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա. Հովհաննիսյանի թիվ N62/8170-19 (այսուհետ՝ N62/8170-19 Որոշում) որոշմամբ կարճվել է թիվ 90204219 քրեական գործով վարույթը՝ հանցակազմի բացակայության հիմքով:

7. N62/8170-19 Որոշման դեմ Դիմողի ներկայացուցիչ Արտակ Քոչարյանը բողոք է ներկայացրել Երևանի կայազորի զինվորական դատախազություն՝ խնդրելով

վերացնել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը:

8. 26.11.2019թ. Երևանի կայազորի զինվորական դատախազ Ա. Անտոնյանը Դիմողի ներկայացուցիչ Արտակ Քոչարյանը բողոքը մերժել է:

9. 10.01.2020 թ Դիմողի ներկայացուցիչ Արտակ Քոչարյանը թիվ 90204219 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2019 թվականի հոկտեմերի 31-ի քննիչի որոշումը և դրա դեմ բերված բողոքը մերժելու Երևան կայազորի զինվորական դատախազ Ա. Անտոնյանի 2019 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը բողոքարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

10. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 22.06.2020 թվականի որոշմամբ մերժվել է Արտակ Քոչարյանի 10.01.2020 թվականին ներկայացված բողոքը:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արտակ Դանիելի Քոչարյանը փաստաբան է հանդիսանում 05.12.2006թ.-ից և 2015-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Արտակ Դանիելի Քոչարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«**Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական

հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- արդյոք փաստաբան Արտակ Քոչարյանը կատարել է պայմանագրով ստանձնած իր պարտականությունները և իրավաբանական օգնություն է ցույց տվել վստահորդին.

- արդյոք փաստաբան Արտակ Քոչարյանը տրամադրել է դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերի և իր հաձնառություններից:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա գրավոր ապացույցները, լսելով կողմերի բացատրությունները, արձանագրում է, որ Դիմողի կողմից բավարար չափով փաստարկված և հիմնավորված չեն այն պնդումները, համաձայն որի Փաստաբանի կողմից թիվ 90204219 քրեական գործի շրջանակներում անհրաժեշտ ոչ մի գործողություններ չեն իրականացվել:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը թիվ 90204219 քրեական գործի վարույթի ընթացքում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար իրականացրել է անհրաժեշտ մասնագիտական գործողություններ, մասնավորապես՝ Փաստաբանի կողմից կազմվել են ՀՀ դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազ Ա. Անտոնյանին հասցեագրված բողոքը ՀՀ ՔԿ ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա. Հովհաննիսյանի 31.10.2019թ. «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշման դեմ, այնուհետև թիվ 90204219 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2019 թվականի հոկտեմերի 31-ի քննիչի որոշումը և դրա դեմ բերված բողոքը մերժելու Երևան կայազորի զինվորական դատախազ Ա. Անտոնյանի 2019 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը փաստաբանի կողմից բողոքարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Անդրադառնալով «Օնեքս» կազմակերպության դեմ ներկայացված քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանի կողմից իրականացված գործողություններին՝ Խորհուրդը նիստի ընթացքում Դիմողի և փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններով արձանագրում է, որ նշված քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանը իրականացրել է անհրաժեշտ խորհրդատվական բնույթի մասնագիտական գործողություններ, ինչպես նաև վարել է բանակցություններ «Օնեքս» կազմակերպության ներկայացուցիչների հետ՝

Դիմողին տեղեկացնելով նշված գործի քաղաքացիաիրավական բնույթի մասին, ինչպես նաև վերջինիս հետ միասին ունեցել է հանդիպումներ և համապատասան բանակցությունների արդյունքում «Օնեքս» կազմակերպությունը պատրաստակամություն է հայտնել վերադարձնելու Դիմողի պատվիրված ապրանքի ամբողջական արժեքը:

Այսպիսով, գնահատելով Դիմողի հանձնարարության շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Պայմանագրի առարկայի շրջանակներում Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության կատարված լինելու հանգամանքը:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ Փաստաբանը Դիմողի հանձնարարության պատշաճ կատարման համար իրականացրել է անհրաժեշտ գործողությունների, մասնավորապես՝ թիվ 90204219 քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում որոշումների վերադասության և դատական կարգով բողոքարկումներ, դատական ներկայացուցչություն և այլ մասնագիտական սպասարկում ինչպես քրեական, այնպես էլ քաղքացիաիրավական բնույթի «Օնեքս» կազմակերպության իրավական վեճի շրջանակներում:

Միաժամանակ, անդրադառնալով վստահորդին տեղեկացնելու հարցին, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ կողմերն իրենց բացատրություններով՝ այդ թվում նիստի ընթացքում, հաստատել են միմյանց միջև հեռախոսազրույցներ և հանդիպումներ ունենալու փաստերը, ինչն իր հերթին իրական հնարավորություն է ստեղծել համապատասխան գործի ընթացքի մասին տեղեկատվություն ստանալու համար՝ հաշվի առնելով նաև այն, որ Դիմողը նիստի ընթացքում ըստ էության չի տվել հստակ դիրքորոշում՝ հնչեցնելով իրարամերժ պնդումներ իր իսկ վկայակոչված հանգամանքների վերաբերյալ:

Մասնավորապես, դիմումի շրջանակներում, ինչպես նաև նիստի ընթացքում Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը երբևէ չի տեղեկացրել գործի ընթացքի մասին և միայն մեկ անգամ, իր հեռախոսազանգից հետո, ասել է, որ թիվ 90204219 քրեական գործով տեղի է ունեցել թվով երկու դատական նիստ, մինչդեռ նիստի ընթացքում դիմողը նշել է նաև, որ մի քանի հեռախոսազանգ է ունեցել Փաստաբանի հետ, ինչպես նաև մի քանի անգամ այցելել է Փաստաբանին նրա գրասենյակում, սակայն խոսակցությանների ընթացքում նրանք չեն քննարկել իր գործի հանգամանքները՝ հավելելով, որ այդ հանդիպումներին ներկա են եղել նաև իր կինը, ինչպես նաև մեկ այլ անձ, ով դիմողի պնդմամբ հանդիսանում էր իրավաբան:

Բացի այդ, նշված հանգամանքին անդրադառնալուց հետո դիմողը պնդել է, որ այդ հանդիպումներին ներկա են եղել երեք հոգի՝ իր կինը և իր երկու ընկերները, ովքեր իրավաբան չեն, սակայն ըստ դիմողի ունեին որոշակի փորձ դիմողի գործին վերաբերող հարցերի լուծման մեջ:

Այսպիսով, գնահատելով Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները Փաստաբանի կողմից իր գործի, դրա ընթացքի և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելու մասով, Խորհուրդը փաստում, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Դիմողի և Փաստաբանի միջև մի շարք

հեռախոսազրույցների և հանդիպումների կայացված լինելու փաստը:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտակ Դանիելի Քոչարյանի (արտոնագիր թիվ 673) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-21015 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Էմին Բեգլարյան

20 հոկտեմբերի 2021թ.
թիվ ԿԳ/175-Ա
ք. Երևան